

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ ԹԻՎ 33 14 ՕԳՈՍՏՈՍ 1904

ՄԺԺ ԴՏԺԲԴՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իսթանբուլի մարտիկների (Այսթանբուլի մարտիկ) Տ. Ա. — Խոսումը (Նորավայ) Մ. ՈՒՂՈՒՐՆԱՆ — Գրական-Քրոնիկա ՆՈՒՊԱՐ : — Սրբերգ ՇԱԲԱՍՊ ԾԻԱԾԱՆ, — Դաւանա- ին գրականութիւն. «Հարիւր ոսկիի համար» ՇԱՀԱՐԻԿ, — Խմբագրական նորեր : — Հանա- զանգ :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթների քաղաքական բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար քառասուն դր. եւ ցաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի : Արտասահման 12 Ֆրանկ-կամ 5 ռուբլի : Քրքասարական ծախքը Խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու քին չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս թեսակ առար- կութիւնները նկատադուրեան չեն առնուիր : Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիրամասչելի պայ- մաններով :

Զեռ-Բէ-Կը ԾԱՆՈՒԹԻ ՀԱՏԵՔ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلامه (ماسيس) غرضه سى ادارى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Rédaction de la Revue MASSIS

Կ. Պոլիս, Հալաքիս

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կա-
ռավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին հա-
ար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապա-
հովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ
ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գոր-
ծառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց
ու վստահելիութեան վրայ գաղափար մը ապու համար թուենք մէկ քանին այն հան-
րածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ դաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարի-
զի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւ այլն թատրոնները, նաեւ
Պօլտոյի, Թուլուզի, Լիօնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ
տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի-վաճառատուները, Իկլմալիօնը, Բրէնթանի, Պէլ-Ժառաինիէոի,
Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հավր-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց,
ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին
վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց
համար. Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային
ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ — Պօլիս: Մահմուտ փաշա, Պէոյիք Եւլազ Խան, Թիւ 14, Լա Գօնֆիօնս
ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիփաի
վաճառատուն մը, Շուկայ Սահաֆլար, Թիւ 46, ուր գաւառներէն տոռածախի յանձնա-
արութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍԱՑ ԱՊՍՏՈՎՂԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆւասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ ֆւասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՒՆՈՒՔԻՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Բաքըրնը Օղլու

Մասնաձեւով Ղալաթիա, Ինայէթ Խան: — Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

5-10



ՅՈՎԱՏՔ ՊԱՆՊԱՆԵԱՆ
(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Մուղաթէրիէ Հիւանդանոցին եւ

Պարոկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 16

Զրաւնեան աբաւքման

Պալատեան ամէն օր ակոյայի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունին իսկ Ուրբաթ, կիրակի եւ երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալատեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու յինած ակոյ-
անքը: Ցորեկները ակոյայ քաջելտալու հա-
մար որչա՞ք վարձք մը չկայ: քաջել տուողին
եամբէն կախեալ է: Վկայեալ տաւանք ու-
ժուհի Տիկին Բըլին եւս կը գտնուի միշտ նոյն
շարժանքով մէջ: Ազգացներուն ձրի 5-10

ՀԱՅՈՒՆԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15ին, եւ. առաւօտ:
Դիւերութիւններու տարեթոյակն է 12 օամ.
ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ.ի
մէջ, եւ կէսը Յունուարի մէջ: Շարաթը դաշ-
նակի մէկ դասի համար տարեկան 3 օամ.
ոսկի եւ երկու դասի համար 5օամ. ոսկի աւելի
կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները
տարին 1ուկէս ոսկի աւելի կը վճարեն:

Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն
ձրի կը դրկուի: Ուրիշ տեղեկութեանց հա-
մար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հաւուս, Կ.
Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. Էֆ. Գալալ-
ճեանի, աստե՛նապետ խնամակալութեան, Ա-
տաբաղար:

5-8

ՀԱՋԱՐԱՆԱՅԻՆ ՏՄԱՐԻՆԵՐ

Աս նոր դիւանի Օրումն հետ համաձայնող խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խողադանձ (սրբաձառ) և արեան տկարութիւն և միւս արեան քշուածեան հետն անքնեքը, որոնք մարմնայ տկարութեան նշաններն են, պիտի աղեականը դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամեն կարեւոր և ամենաքանակելի բան մը համարուի: Այս բան հիմա աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն անեղանքները:



SCOTT'S EMULSION

որ Առեւտական միջնորդի մէջ գտնուած փոշիները նշանակուած պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ: յարմար է միշտ բերանայն առնելու:

ԲՍՄՈՅԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Նաեւ մարդկային մարմինը շահագործելու լաւագոյն արդիւնքը կը վերնաէ:

ԲՍՄՈՅԻ ԲԱՆԺԱՆԵՐ

Արեան տկարութիւն սեւ թղաղուելու քիչ քանակութեամբ ԲՍՄՈՅԻ ԲԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ և ԲՍՄՈՅԻ ԲԱՆԺԱՆԵՐ կը բժշկէ:

Հիշելու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Դրասենեակ՝ Մահմաւադ — փաշա, Թարազձրար, Մեծ Նոր Խոնի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը սաքրուին աղտոտ և փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բուրդէ տպէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ եւ է արագ կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բուրդովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւլէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ աւ ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնը պէտք է ուղարկն գրասենեակը:

Դիւրամատչելի պայմաններ: 5-10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

Ամեն սեսակ քօհաֆիլէ ապրանց

Մեծ—Նուկայ, Բիւրճիկերու դրան կից, Թ. 41-43

Նոյնպէս, արագ եւ կանաչ ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սալթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները թէ՛ թօհաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց աւ կանաչ յատուկ հովանոցներ, իրենց գիղեցկութեան կը միացնեն տակուլութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն, որ կ'ընծայեն հարաւարակութեան:

Աղամ վարդեան մեծ ալիս գոհ թողնցած է իր բաղմամբիւ յաճախորդները: Կ'ալ ժէ որ Շուկայ կ'ըլլող մօէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները եղանակին պէտքերը հազալու համար:

5-10

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 33

14 ՕԳՈՍՏՈՍ 1904

ԳԱԼՓԱՅԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ ԾՈՒՐՋԸ

(ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ՍՈՒԹԻՒ)

Ծղմարտապէս սփոփարար ու կաղզուրիչ սպաւորութիւն մը կը կրէ որ և է անհատ որ, վերջին անգամ տեսած ըլլալով Գալփաեան Որբանոցին նախկին խարխուլ ու կիսափուլ չէնքը, նորագոյն այցելութեամբ մը դէպ ի նստգիւղ՝ իր դէմ գտնէ վերանորոգուած չէնքը, նոյն իսկ կիսաւարտ։ Թէև պատուհանները դեռ ապակի չունենան ու դուռները անցուած չըլլան, և իբր մէկուկէս ամսուան աշխատութեան պէտք մնայ՝ բնակելի ու ներկայանալի վիճակի մը մէջ դնելու համար վերաշինուող Որբանոցը, բայց դարձեալ՝ այս թերի վիճակին մէջ՝ անոր տեսքը կը բաւէ համոզում գոյացնելու թէ լուրջ, խղճամիտ ու տեսական գործ մըն է կատարուածը՝ անոր նախաձեռնութիւնն ստանձնողներուն կողմէ։

Հաւրկէ է ըսել թէ այս նախաձեռնութիւնը կը ստանանի նոյնքան նշանակալուծի Տիկիններուն որքան Շինութեան հսկող Յանձնաժողովին, և մասնաւորապէս առաջինին գործն անդամուկներէն Տիկին Սրբուհի Կ. Գարակէօզեանի՝ իբրև ատենապետ ու Տիկին Վասիլուհի Ն. Գարակէօզեանի՝ իբրև գանձապետ, և երկրորդին ժրջան անդամներէն եղուարդ էֆ. Գարակէօզեանի որոնք ինքնաբեր հակում մը, սրտագին փարում մը ունեցան այս գերազանցապէս մարդասիրական ձեռնարկութեան, ո՛չ միայն դրամական կարեւոր նուիրատուութեամբ մը, այլ անձամբ երթալով, հսկելով՝ մէկ կողմէ Որ-

բանոցին ներքին բարեկարգութեան վրայ ու միւս կողմէ շինութեան կանոնաւորութեանը, մինչ միեւնոյն ժամանակ ո՛չ նուազ կը զբաղեցնէր զիրենք՝ մեծաքանակ ծախքին հայթայթման ու ամբողջացման պէտքը։

Այնպէս որ, կարելի է ըսել թէ Գարակէօզեան ընտանիքին այս աղնիւ ու անձնուէր ներկայացուցիչները իրենց համար սիրելական զբաղում մը ըրին՝ քայքայուած Որբանոցը բարոյապէս ու նիւթապէս վերականգնելու գործը, զոր առաջ կը տանին՝ պահանջուած ամէն զոհողութիւններն ստանձնելով սիրայօժար։

Միւս երկու խնամակալուհիները՝ Տիկին Իսկուհի Կ. Փափաղեան (ատենադպիր) և Տիկին Էլիզա Տէր—Յարութիւնեան ոչ նուազ եռանդով կը նուիրեն իրենց աջակցութեան բաժինը, ինչպէս նաև Շինութեան Յանձնաժողովին միւս անդամները՝ Տեարք Եղիա Շահպաղ, Տիգրան Բարաղամեան ու երկու ճարտարապետները, — առանց մոռնալու թէլեան Բարթող էֆ.ն որ՝ կործանման մօտ եղող տխուր ու անկերպարան վիճակէ մը փրկեց Որբանոցը, Երանուհի մարապետին հիւանդութեան օրերէն սկսելով, ու մինչև այսօր կը նուիրէ ամէն հնարաւոր աշխատութիւն, միշտ աջակց նշանակալութեան ու Յանձնաժողովին՝ գրչով, խօսքով, գործով։

Այսքան լաւ ապրերէ՛ կաղմուած երկու մարմիններ բնական էր որ յաջողէին գոհացում տալ հանրային բարեգործական պէտքի

մը որ տարիներէ ի վեր կըզգացուէր և որուն յապագումէն ընտանեզուրկ խեղճ պզտիկ աղջիկներն էին որ պիտի տուէին: Անան առաջին ցուրտերուն ու անձրեւներուն, անոնք պիտի փոխադրուին իրենց նորոգուած բնակարանը որուն ճարտարապետներն ու հսկողները իրենց ուշադրութեան առաջին առարկան ըրած են շէնքին առողջապահիկ պայմանները: Եւ արդարեւ, հին՝ անկարգ անկանոն շէնքին ու անոր աղակաւնուած մթնոլորտին տեղ՝ Գալֆաեան Որբանոցին սանուհիները պիտի գտնեն լայն ու հանգստաւէտ ճաշարան մը գեանայարկին վրայ, մանկավարժական պահանջներու համապատասխան դասարաններ որոնք կը գրաւեն ամբողջ միջին յարկը, և վերը՝ միմիայն ննջարանի ծառայող ընդարձակ ու օգտաւէտ սրահներ ուր է՛ն բարեկեցիկ ծնողքի զաւակ մը չպիտի վարանէր գիշերելէ, եթէ Որբանոցի տեղ՝ գիշերօթիկ վարժարան մը եղած ըլլար նորակառոյց շէնքը:

Տօքթ. Խօրասանճեան էֆ., ողբացեալ բժշկապետը, երբ երկու տարի առաջ՝ Երասնուհի մարապետին հիւանդութեան վերջին օրերուն հրաւիրուեցաւ անոր սնարին մօտ, ուր սիրայօժար փութաց, մահամերձ հիւանդին վրայ իր ղննութիւնը կատարելէն ետքը՝ հիւրանոցի ծառայող սենեակին մէջ, իրեն ընկերակցող բժիշկներուն ու միւս ներկաներուն դառնալով, ըսաւ կարեկից շնորհով մը. — «Մարապետը հիւանդ է, բայց Որբանոցը ա՛լ աւելի»: Ու հանրային դժութեան կոչում ըրաւ, որուն արձագանգ տուին թերթերն օրը օրին, խօստանալով ինքն ալ օժանդակել: Եթէ մահը խլած չըլլար այդ մեծ գիտունը ու մարդասէր բժիշկը մեր մէջէն, ինք առաջին հրճուողներէն մէկը պիտի ըլլար այսօր՝ տեսնելով որ թէ և մայրապետը մեռաւ, բայց Որբանոցը կենդանացաւ:

Բայց ի՞նչ յարատեւ ու մեղուաջան աշխատութեան պէտք կար՝ առաջադրուած բարի գործը գլուխ հանելու համար, որուն այնքան հոգածու գտնուեցաւ նաեւ Ս. Պատրիարքը: Նախ հարկ էր Որբանոցը մաքրել ներքին կեղտոտութիւններէն, անկարգու-

թիւններէն, անխամութիւններէն: Աղջիկները յուր սնունդ կ'առնէին, անմաքուր կը հագուէին, անխամ կը մեծնային: Իրենց այն ատենի ու այսօրուան վիճակը բաղդատական աչքով դիտող մը զգալի բարոքում ու տարբերութիւն պիտի տեսնէ, բան մը զոր կը պարտին բարետոհմիկ խնամակալութիւններուն որոնք Բերայէն, Վերին Վոսիօրէն, Գատըզիւղէն մինչև Խասգիւղի բարձունքը կ'երթան ամէն շաբթու, կանոնաւորապէս, ու անձամբ կը հսկեն ամէն բանի վրայ. կը մտեն խոհանոց, մառան, լուացարան, աչքէ կ'անցունեն հանդերձեղէնները, անկողինները, կը հարցնափորձեն աղջիկները՝ իրենց պէտքերուն վրայ: Եւ, տեղն է ըսելու, թէ արդի մայրապետը՝ Քոյր Քրիստինէ, մօր մը պէս կը գուրգուրայ անոնց վրայ ու տրտունջի տեղի չի թողուր:

Այս ներքին հսկողութեան եւ հոգածութեան արդիւնքները տեսնուիլ սկսած էին արդէն, երբ շէնքին հիմնական նորոգութեան պէտքը շնչոտուեցաւ: Առաջինին համար Տիկնանց Խնամակալութիւն մը կազմուած էր որուն խղճմտութիւնը վայրկեան մը չի տկարացաւ. երկրորդին համար Յանձնաժողով մը պէտք էր որ հսկող ըլլալէ աւելի՝ գործող ըլլար, շինութեան գործէ հասկցող, մատակարար ու միանգամայն նպաստի գործին հետամուտ: Այդ մարմինն ալ, իր կազմութեան օրէն, օրինակելի աշխատութիւն մը ցոյց կուտայ, բարերար դեր մը կատարելով և իր ստանձնած գործը ամբողջովին ի գլուխ հանելու համար դեռ կը կարօտի մարդասէրներու նպաստին որ ապահովապէս չպիտի զլացուի, դատելով այն անխառն համակրանքէն զոր կը գտնէ Գալֆաեան Որբանոցին վերաշինութեան ձեռնարկութիւնը՝ կարող ու վստահելի ձեռքերու մէջ:

Տ. Ա.

Տօքթ. Դաւիթեան էֆ., որ ժամանակէ մը հետէ Բաբիդ կը գտնուէր մայրաքաղաքս վերադարձած է:



ԽՁՈՒՍԸ

(ՆՈՐԱՆԱԳԵՊ)

Ձրըչըրի խորհրդաւոր ու յանկուցիչ դքօսաւայրը տակաւ լենալու վրայ էր։ Այդ ստուերոտ անկիւնը, ամբոն եղանակին կիրակի իրիկունները մանաւանդ, հաճելի ժամադրաւայր մը կը դառնայ այն ընտանիքներուն համար որոնք քաղքին հեղձուցիչ, անտախելի տաքէն ու փոշիէն փախչելով Պէօյւքտէրէ կամ Եէնի-Մահալլէ ապաստանած են։ Ընդհանրապէս դտուած, «մաքուր» բազմութիւն մը վիճակուած կ'ըլլայ իրեւացելու՝ այդ աղուոր՝ ծանօթ զբօսաւայրին, ուր «ինձէ սազ»ի կամ արեւելեան երգերու հմայքոտ տպաւորութեան տակ, ընթրիքի կամ իրիկնաճաշերու ըմբոյխնումին հետ, ղովուկ ջրի վայելումով մը կը սահին, կ'անցնին հաճոյասէր-հոգիներուն համար օրուան գեղեցիկ ժամերը։

Երբ կառքէն դուրս ցատքելով Եդուարդ իրեն համար այնքան սիրելի ու մտերիմ այդ հովանասփիւռ պարտէզէն ներս մտաւ, իր առաջին մտածումը եղաւ—կառքին մէջ ըբած խորհրդածութիւնները պահ մը մոռցած—երթալ աւաղանին մօտ մենուկ տեղ մը կզգիտնալ։ Թէեւ առանձնութեան և ինքնամիտփումի սիրահար, բայց այդ իրիկունը մասնաւոր տրամադրութիւն մը ունէր իր սրտէն անբաժան նիւթի մը վրայ խօսք բանալու սիրուած բարեկամի մը, որուն բախտ չէր ունեցած հանդիպելու տակաւին։

— Զարմանալի բան, յարեց պահ մը չուրջը կիսատ նայուածք մը պտտցնելով, դոնէ Գեղա՛մը հոս ըլլար... և թաղուեցաւ վերստին իր անվերջ մտածումներուն մէջ։

Եդուարդ Մանիշակեան խրոխտ ու ազնիւ գաղափարներու տէր՝ համակրելի երիտասարդ մըն էր։ Օժտուած արուեստասէրի այն խրատապահանջ հակումներով որոնք ա՛յնքան զգալապէս յատկանշել կուտան նուրբ ճաշակի և ընտիր նախասիրութիւններու նուիրում

հոգին, իր մէջ կրցած էր դաշնաւորել մտածումի և վայելքի մարդուն ղոյգ մը ներհակ առանձնայատկութիւնները։ Լաւ և լուրջ խօսող, մերթ սրամտութիւններով համեմուած իր բառախաղերն ու կատակաբանութիւնները յիշ հաճոյքով չէ՛ որ կ'անկնդրուէին այնպիսի մտերիմ միջավայրերու մէջ ուր կին տարրը ա՛յնքան կը սիրէ զուարճանալ և յուզուիլ իր հոգիին մինչև իսկ ամէնէն թաքուն ու հեռաւոր արքերուն մէջ...

Հակառակ իր այս քնահաստելի ձիրքերուն, որոնց կը միանար նաեւ խիստ գաղտնապահութիւն ու շրջահայեցութիւն—սիրաշխարհիկ կեանքի անել նրբուղիներուն մէջէն անսայթաք յառաջանալու գրեթէ միակ ապահով պայմանները—ծածուկ ցաւ մը եկած էր բոյն դնել իր քիչ մը սկեպտիկ ու թերահաւատ սրտին մէջ։ Կը սիրէր. բայց հակառակ սիրուած ըլլալու մեծ հաւատքին, բնաւ միտքէն չէր անցած թէ այդ սէրէն, օր մը, տխուր յիշատակ մը միայն կրնար մնալ—բոլոր ճակատագրականորէն դատապարտուած ամուր սէրերուն պէս։

* *

Անպայման ուրախութիւն մը ճաճանչի նման փայլեցաւ Եդուարդի դէմքին վրայ, երբ Արշամ Զուարթեան օր հեռուէն նշմարած էր զինքը, իրեն մօտեցաւ։ Երկու սրտակից բարեկամները բաւական տտեսնէ ի վեր տեսած չէին զիրար, Արշամին ընտանեօք Պէօյիւքտէրէ փոխադրուելովը։

— Հաւատա՛ որ մեծ հաճոյք պատճառեցիր ինձի, ըսաւ Եդուարդ հրճուաղին, ընկերօջը ձեռքը իրենին մէջ սեղմելով. բայց ո՛ր էիր որ աչքէս վրիպեցար. ո՛րչափ պէտք ունիմ քեզի...

— Վերը ծառերուն տակ ֆլիրթօվ զբաղած էի... չեմ մեղադրեր անշուշտ, պատասխանեց Արշամ, և անհամբեր երեւոյթով մը աւելցուց։— Պատմութենէդ ի՞նչ լուր կայ նախինք... ո՛ր յանգեցաւ վերջապէս։ Գիտես որ բնա՛ւ տեղեկութիւն չունիմ այդ հետաքրքրական գործին մանաւանդ վերջին դրուագներէն։

— Օ՛հ, բայց ինչե՛ր կան նկարագրուելիք։

Արշա՛մ, եթէ գիտնաս թէ ո՛ւր յանգեցաւ: Բայց կեցիր, մի՛ աճապարեր, անակնկալն երով լեցուն է պատմութիւնս...

Եղուարդ շուրջը նայեցաւ իբր թէ ապահովուելու համար որ զիրենք մտիկ ընող չկար և շարունակեց.

— Երբ երեւակայես թէ Հերմինէին միջավայրն ալ ցոյց տայ՝ եկամուտ, օգտապաշտ բարքերու ակտանիւ մը, որով ա՛լ համոզուիս թէ աւելի իբրեւ տեսակ մը ամֆիթրոն ներելի է մտնել այդ յարկէն ներս քան զմայլուն Ռօմէօ մը, երկնքին եօթներորդ յարկէն վար ինչալը նշանակութիւն չունենայ գուցէ... Պատմած էի արդէն քեզի թէ բացի շարունակական պտոյտներէ ուր սրտի կեանքէ էջեր կը թղթատուէին, երեկոյթներու, պարահանդէսներու գտնուած է՛նք միասին ու յաճախ մինչև լոյս պարած, թէ ինքզինքս աշխարհի երջանկագոյն արարածը կը նկատէի և թէ վերջապէս այն պատուական համոզումը ունէի թէ անոր նման փափուկ, երազային՝ բայց նկարագրի տէր աղջիկ մը երբեք կարելի չէր որ կեղծէր, ստէր, սրտի հետ խաղար ու դայն բզբտել փորձէր: Ասոնք ամէնը միամտորէն լաւ. բայց երկար տարիներու սրտակցութիւն մը զոր նոյնաման գաղափարներու, զգացումներու անընդատ օղակաւորում մը այնքան նուիրագործած ամրացուցած էր, ջլատուելէն առաջ երբ անիմաստ քմահաճոյք մը կուգայ զայն անգըթօրէն աւրշտկել, դժոխային չե՞ս գտներ այս պարագան:

— Ի՞նչ քմահաճոյք է այդ հարցուց Արշամ անձկութեամբ:

— Մայրական քմահաճոյքը, ինչպէս ամէն ատեն: Եւ սակայն ատիկայ բաւական եղած էր պղտորելու իմ սրտիս հորիզոնին կապոյտը: Հերմինէին մայրը՝ ջղային, բծախնդիր կին մը, ի բնէ նախանձոտ, տարօրինակ խառնուածք մըն է, որուն մէջէն թափանցելով իր ինքնութիւնը ճանչնալ ամէն մարդու տրուած չէ: Իր նախասիրութիւնները, մեծամիտ ըմբռնումներն ու գնահատելու մասնաւոր ճաշակը ունի ան տակաւին, զոր չեմ դիտեր թէ ի՞նչպէս հաշտեցնել կուտայ ան-

հրապոյր տարիքի մը ընծայած խորշումի պարագային հետ:

— Ըսել է այդ կինը քու սիրային ծրագրիդ ու է կերպով վնասելուն միակ պատճառը կը նկատես... դիտել տուաւ Զուարթեան:

Եղուարդ գառնութեամբ գլուխը օրօրեց.

— Երանի՛ թէ մինակ այդ ըլլար: Բայց պիտի կրնայի՞ր հաւատալ թէ Հերմինէն, այդ երբեմնի աննման աղջիկը, այդ ներշնչարան — հոգին, կրնայ եղեր մօրը մեղսակից մը ըլլալ. ահա ինչ որ անհամեմատ կերպով ընդվզեցնող է... Բայց մինչև հոտ ո՛րքան անսովոր իրադարձութիւններ և անշուք դիմայեղումներ զորս մի առ մի թուել գլխի պտոյտ պիտի պատճառէր...

Եղուարդ պահ մը լռեց զգացած հոգեւորտային տարտամ ջաւէն որուն տպաւորութիւնը արդէն Արշամին ալ հազորդուած էր: Այս վերջինը զարմացած մնաց, իր բարեկամին արդի պատմութեան իւրաքանչիւր էջին միանգամայն երկիւղածօրէն ունկնդրելու դիրքին մէջ, երբ միւսը շարունակել սկսած էր դարձեալ...

— Կ'ապրիս այդպէս հէ՞. և իրաւունք ունիս: Ահա թէ ուր կրնար յանգիլ կոյր պաշտումին եռանդը: Եթէ կնոջ մասին լաւատես հաւատքի մը ջնջումը զգալ իր հոգիին մէջ՝ պարզապէս մահացումն իսկ պիտի նկատուէր այն գեղեցիկ ուժերուն որոնք այդ հաւատքը կը ծնցնեն, զգացուած պատրանքը միթէ ալ աւելի սաստիկ հանգամանք մը չպիտի առնէր երբ փոխադարձ վստահութեամբ նուիրագործուած սիրոյ մը խորանն է որ կը քանդուի, երկուստեք երկար աշխատութիւններով մարմին առնելէ վերջ...

— Կը հաւատամ թէ վարդագոյն չէ կացութիւնդ. բայց չեմ կրնար հաւատալ թէ ամէն աղջիկ Հերմինէ մը կրնայ ըլլալ: Եւ յետոյ, աշխարհիկ կեանքի մէջ հազուադէպ չեն այս կարգի տխուր դրուագներ, որոնց ծանօթութիւնը մեզ լաւագոյն իմաստութեան պէտք է առաջնորդէր... Բայց à propos! Միտքդ կուգայ թէ յիշատակներուդ անդրաբաղաւաճումը խոստում մը ըրեր էիր:

Եղուարդ այս անգամ մեքենաբար գըր-

պանէն տետրակ մը դուրս հանեց, որուն մէջէն Արշամին մասնաւոր ուշադրութիւնը գրաւեց գունաւոր մատիտով նիշուած էջ մը զոր սկսաւ կարդալ...

«... Գիշեր մըն էր աշնան հրապուրիչ ու լուսաստիլառ երկնակամարով բարի գիշեր մը. ներման գիշերը. ահ, կարելի՛ էր չյիշել. եւ այն գիշերը բնա՛ւ երկինք այնքան յաճախ դարձ էր եղած, ո՛չ ալ աշունը այնչափ հմայիչ, խելայեղիչ... աշուն և գարուն քով քովի. մօտս պարտէզիս մէջ, ինչ հրաշա- տիպ խորհրդաւորութիւն: Ան, փափուկ, մե- լամազձիկ նայուածքը յառած անծանօթ ու հուսոր տեսլականի մը, հազիւ կը լսէր սրտիս ձայնը որ կըսպասէր բարախուն: Ու- րիշ ձայն չկար մեր շուրջը. մեր հոգիները կը հեւային մերթ հեշտայի շշուշով մը և օդին մէջէն հաճոյք մը կը սլանար կարծես...»

«Ինչպէս ուռեցի ի տունի մը մեղմիւ կը հակի առուակին բիւրեղին, այնպէս հրավառ դուխս իջաւ՝ անձայն ու թեթեւ՝ համբու- րելի ուսերուն վրայ... չեմ գիտեր թէ ընաւ անակնկալ մը այնքան հմայքով օծած էր հողիս որքան երանաւէտ՝ թէ և հպանցիկ կենսանակութիւնը այդ առաջին համբոյրին...

Յանկարծա՛յան ներյուզումի մը տպաւորու- թեան տակ, Արշամ պահ մը երազկոտ մնաց, անթարթ աչքերը հեռուն, անծանօթ կէտի մը վրայ սեւեռուն: Այս ընթերցումը խռովեր էր իր հոգին: Հակառակ իր դիւրադրգիւ ու խանդավառ բնութեան, և կնոջ նկատմամբ իր լաւատես ըմբռնումներուն, այս դրուագը իրեն լրջօրէն մտածել տուաւ: Ու ակամայ նայ՝ ցաւ վայրկեան մը իր ընկերոջ, որ ան- խօս ու մտադրաղ, աւազանին չորս կողմէն ժայթքող շատրուանաձև ջրացաւքը կը դիտէր, կարծես վրիպեցնելու համար իր տենդոտ նայուածքը Արշամինին հանդիպելէն...

Նշուարդին բարեկամը անկեղծ ու հա- մարձակ տղայ մըն էր, անոր նման անշահա- ոէր, առկուն նկարագրով մը օժտուած, և իրարու նկատմամբ անսահման համակրութիւն մը ցոյց կուտային, գորովի, խանդաղատան- քի աստիճան, որ երբեմն պաշտանքի, գրեթէ տարփանքի մը ձեւը կ'առնէր: Կատարեալ

իրերաճանաչութիւն մը և մանաւանդ լուրջ զարգացումի, ճաշակի, գաղափարներու նոյ- նանման վիճակ մը մեծապէս նպաստեր էին այդ անքակտելի եղբայրակցութեան:

Լուսութիւնը առաջին անգամ խզողը Ար- շամը եղաւ:

— Այս յիշատակները հեռուէն լսուած մե- ղեղիններու տպաւորութիւնը կը թողուն եր- բեմն...: Բայց չըսիր թէ ինչ մասնաւոր պատճառ մը մղեց Հերմինէն, սիրային այս- քան յայտնի ապացոյցներէ վերջ, յանկարծ քննէ հրաժարելու...

— Ամբողջ խորհուրդ մըն է ատիկայ, որ աւելի կը զգացուի, քան որչափ չպիտի կըր- նար իրապէս բացատրուիլ: Կը յիշեմ թէ եր- գերուս ամէնէն ուժովները և մտածումներուս ամէնէն ծաղկածները նուիրած եմ իրեն, յա- ճախ իր իսկ թեւադրութեամբ, այս էջերուն մէջ, ինչպէս կը տեսնես, զորս անհամբեր կարդալու և ընդօրինակելու առիթը չէ փախ- ցուցած երբեք: Ուրիշով, հետաքրքրու- թեամբ, սրտակցութեամբ կամ փոխադարձ վստահութեամբ կազմուած սէրերէն տարբեր բան մըն էր մերը. տեսակ մը անխմանալի երանութեան շրջան ուր վերացումներ, միս- թիք հաղորդութիւններ, մտածումի և ներ- յուզումի եղբայրակից հոգեկան վիճակներ, զիրար ակամայ չարչարելու՝ եթէ ոչ վայելե- լու անմեկնելի զգայութիւններ իրենց բա- ժինը ունէին: Ամաթէօսի սէր վերջապէս: Եւ արդէն ո՛վ պիտի հանդուրժէր անուշ- սիրոյ մը անտանելի կերպով միջակ սովորա- կանութեան: Կը յիշեմ թէ զինքը գաղա- փարապէս անմատոյց բարձրութիւններու հա- սած տեսնելու անխառն հաճոյքիս մէջ որ- չափ անկեղծ խանդավառութիւն, որչափ ցնորունակ արբշուութիւն դրած եմ. — միա- մտօրէ՛ն. — ո՛վ գիտէ: Եւ ինքը, Հերմինէն, գլխէր այս ամէնը, թերեւս իմ գիտցածէս աւելի:

Արշամ, հետզհետէ հետաքրքիր՝ այս տարօրինակ սրտախաղին կրած երեւոյթներէն, ընդմիջելու ու և է աննշան չարժու մ իսկ չէր փորձեր:

— Օր մըն ալ, յանկարծ, իր ներշնչող

հոգիի, բարի քրոջ ու նախանձելի սիրուհիի դերը ջնջուեցաւ, լինցաւ: Յոգնած էր այս խորհրդապաշտիկ սէրէն թէ իր սիրտը մեծ զգացումներուն ու բուռն կիրքերուն հրայրքէն սպառնացուած...: Տե՛ս այս առթիւ ի՛նչ կը գրէր ինծի. «Ես սէր բառին իմաստը ա՛յնքան լայն ու խոր կ'ըմբռնեմ որ չեմ հաւատար երբեք թէ կրնամ իմ սրտիս զգացումներուն համապատասխանող զգացումներու տէր սրտի մը հանդիպիլ»: Եւ աւելի անդին ակնարկելով մեր յարաբերութեան «Մարդ խաբելը սկզբունքիս հակառակ է»: Այս վերջին տողը, սակայն, իրերուն իրենց որոշ, իսկական դոյնը մատնել առաւ: Դաւանդէն սկսայ տարակուսիլ թէ մի՛ գտնէ տեսակ մը կատակերգութիւն ըլլար Հերմի-նէին կուրծքին տակ անցած դարձածը...: Բայց իրողութիւնը այդ իսկ էր: Այդ սիրտը ընդունակ ու արժանի չէ՛ր երբեք աննիւթական մաքուր յուզումներուն ու վայելումներուն որոնք ա՛յնքան բացառիկ սէր մը կը յատկանշեն — և սակայն այդ աղջիկը հրաշալի՛ կերպով կրնար իբր այն կեղծել...:

— Բայց սրտի այդ հակասութիւնը, այդ անարդարանալի՛ կերպով նենգ վիճակը իրեն դիտել չի տուի՛ր, հարցուց Արչամ, գեղեցիկ ցասկոտութեամբ մը:

— Ինչպէ՞ս չէ: Եւ տրուած պատասխանը ան եղաւ որ, ինք մեր հոգևորտային կացութիւնը բարեկամական կամ եղբայրական սէր կը նկատէ եղբր: Մնաց որ այս բառաօք-սային սահմանումէն՝ հաւատքս մեծ յեղաշրջում մը կրեց: Ու նոր յարաբերութիւններ, մտերիմ ներաշխարհի տպաւորութիւններ նուազ չնպաստեցին Հերմինէին իր այս առաջին սէրէն բոլորովին ուժանալու:

— Ըսել է միջավայրն ալ կ'օգնէր իրերուն աննպաստ դարձուածք մը առնելուն. բայց քիչ մը առաջ կ'ըսէիր թէ նկարագիր ունէր գեղուհիդ...

— Նկարագիր ունէր, աւա՛ղ: Եւ սակայն երբ մեղերա մօր մը աղղկեցութեան տակ ու չեմ գիտեր ի՛նչ արհեստի պատկանող տան բարեկամներու հետ շարունակական չի՛ման մէջ գտնուի մարդ, ու ամէն տեսակ շրջ-

սանքներ, յուզումներ վայելումներ պալաս չի մնան հոտ, այդ յարկին տակ, նկարագրին վրայ մտածողը ո՛վ պիտի ըլլար...: Արչա՛մ, այս նիւթապաշտ դարուն մէջ մաքուր, կոյս սիրտ փնտուել մեծագոյն տխմարութիւն է — գոնէ իմ բացարձակ համոզումովս:

Երկու բարեկամները իրարու նայեցան: Յայտնի էր թէ եղբարդ, իր սրտին հպարտութեան ու անձնասիրութեան երբեք չէր ներէր տարտալ, նենգաւոր սիրով մը տուայտիլ ո՛րքան ալ ատեն մը. — Երկար ատեն — զայն ճշմարիտ կարծած ըլլար՝ Արչա՛մ զգացած էր այս պարապան, զոր դիտել տուաւ գորովաբին եռանդով մը.

— Քու սիրտդ ե՛ս կը ճանչնամ: Անկումի, լքումի սահմանուած չէ ան երբեք և այս անցքը զայն չի նսմացներ, այլ անոր չքաւորումը, փառքն իսկ հաստատած է: Հոն ուր ուրիշներ պիտի դեղեկէին, դուն անայլայ կը կենաս, եւ բարձրէն կը նայիս՝ այն անգոյն ու կեղծարոյր հոգիներուն, որոնք, ներքնապէս տարապայման վաւաչոտութեանց անձնատուր, ճարտար subtilit՛եներով կ'անցունեն իրենց ժամանակը: Վանէ՛ դանոնք սրտէդ, անոնք արժանի չե՛ն քեզի...:

Այս փաղաքշական, բայց նոյնքան անկեղծօրէն սրտապնդիչ ձեւը եղբարդը յուզեց: Պիչ պիչ բարեկամին աչքերուն խորը նայեցաւ ուր կը կարդացուէր հոգեկան աննկարագրելի խռովանք մը: Եւ հաստատուն ձայնով մը ըսաւ.

— Հաւատա՛ որ արդէն ամէ՛ն յարաբերութիւն խզած եմ անոր հետ...:

Իրենց այս խօսակցութիւնը, սակայն, երկար չտեւեց: Զբօսավայրը ա՛լ լեցուած էր ամենաղգի խռուն բաղմութեամբ և իրենց մօտ գտնուած մէկ քանի թափուր թռուկներն ալ գրաւուելու վրայ էին: Տեսակ մը հեշտալի երանութիւն սկսած էր ծաւալիլ օդին մէջ. զոր իրիկուան ղոլութիւնը պարտէզին ստուերաշատ ու չնաշխարհիկ հանգամանքը և «ինձէ սաղ»ի երազային ու արքայուտ եղանակումները ա՛լ աւելի հմայիչ կը դարձնէին: Պահն էր ուր մարդ ներքին, անբացատրելի հաճոյքէ մը կրնար մարիլ, լիննալ...

կառսօսին յանկարծական երեւումը իրենց առջեւ, սուրճի արագ սպասարկութեան մէջ, եւ մանաւանդ, իրենց մօտ, վերջին պահին, հայ ընտանիքի մը գալուստը վայրկեան մը ընդհատեց իրենց խօսակցութիւնը։ Շըրշահայեաց եւ ղգուշաւոր, սկսան, այս անգամ, տարբեր նիւթ մը փնտռել, եւ խօսեցան բնութեան նկարագրող տեսարաններուն, չրջակայ Զուրերուն բարձունքին օղաշատ առաւելութեան, վերջապէս գիւղագնացութեան մեծ օգտակարութեան վրայ։ Ու քիչ մը վերջը, ինչպէս ամէն Զըրջըրի անխարդախ ջուրի սիրահար, Արշամ ալ, իր կարգին, իր առջեւ դրուած ջուրի չիւր պարպելով, աղբիւր կ'իջնէր, բուն իսկ տեղէն լեցնելու համար զայն։

Հիմայ, հանգիստի ամբողջ օր մը վաշելած, ապրած՝ ըլլալու քիչ մը միամիտ, գուցէ ինքնախարօրէն գոհունակ տպաւորութեան մը տակ, երկուքն ալ, իրենց սիկարէթներուն ծուխի թեթեւ գուլաններուն փրփուրը օգին մէջ ցրուելով, կառքի մը մէջ տեղաւորուած, սրարչաւ կը դիմէին դէպի Պէոյլըքտէքէի նաւամատոյցը։ Արշամ ծովեզերեայ սրճարանը կ'երթար՝ տրուած ժամադրութեան մը համաձայն, մինչ Մանիշակեան վերջին շողենաւով Պոլիս պիտի վերադառնար։ Ծամբան այլ եւ այլ նիւթերու վրայ երկար ատեն կարծիքի փոխանակութենէ մը վերջ, Արշամ, գաղափարներու ղուգորդութեամբ մը, իր բարեկամին խզումի պարագային ակնարկելով ակամայ՝ դիտել տուաւ։

— Երբեմն սիրաւին յարաբերութիւններու ձգտումի մը մէջ՝ ալ յանդիմանական ցոյցեր կան որոնք սա ծանօթ առածը կը յիշեցնեն «qui aime bien châtie bien» բայց ասով ըսել չեմ ուզեր թէ քու որդումդ կրնայ բարեփոխում կրել եւ թէ...

Միւսը, դառնութեամբ ընդմիջեց.

— Իմ խզումս բացարձակ է եւ անպայման։ Եթէ այս պարագան Հերմինէի՝ իմացունելու չափ խիզախ եղայ, յանցանքը իմն է։ Ինչ փոյթ եթէ նոյն իսկ սրտին լարերն

ալ միասին խզուիլ սպառնան... կը բաւէ որ հպարտութիւնը, անկախ ու չքեղ զգացումներով նախանձելի հպարտութիւնը՝ ուղղած ըլլայ այդ սրտին մինչեւ իսկ ամէնէն թաքուն մնացած խորշերը...

ՄԻՇՐԱՆ ՌԵՂՈՒՐԵԱՆ

ՍԻՐՅԵՐԳ

Կըսկիծ մը սրտիս մէջ կայ վիբաւոր Զոր արեւուն յոյսն անգամ չի բուծեր ետեւեւն ու ցաւոս մարմնում մը որ՝ Ռճ, պիտի լայննայ երբ իջնէ գիշեր։

Կը ճիւծին ցոլերն յոյսն հեռաւոր, ետեւեւն մը պէս՝ որ վազ է մարեր։ Բայց դեռ կը յուզէ գիս քնիւ մ'աղուոր։ Զոր ինձ կը բերե՛ի անցեալիս յուեր։

Ու պիտի ապրի՛մ. վիշտը նոր ոյժեր կը բերէ յանկարծ հոգւոյս կարեպէր, Կեանքին կը դառնամ՝ դեռ չրած գիշեր։

Փուեր մըխուեցան օրէ օր սրտիս, Ու հոն հեծեծանք մը բերին հովեր։ Բայց սիրոյ յոյս մը կ'արեւէ հոգիս։

ՏԻՍԱՍՊ ԾԻԱՏԱՆ

Սկիւտար

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԼՈՅՍ

Ուժին (force), ջերմութեան, մագնիսականութեան և ելեկտրականութեան պէս, լոյսին ալ սահման մը տալ անկարելի է և գիտութիւնը դեռ չէ կրցած բացատրել թէ ի՞նչ է ուժ, ջերմութիւն և այլն ըսուածը ու «տեսակ մը զօրութիւն» խուսափողական անուանումով կը յորջորջէ զանոնք։ Ասոնք պարզապէս պատճառներ են, զորս չենք տեսներ մենք, և անոնց արդիւնքները միայն տես-

սանելի են մեզի. արդիւնքներ, որոնք իրենց կարգին մէջմէկ հրաշալիքներ են մարդկութեան ճակատագիրը փոխելու հոչուած և որոնց առջև լուին խոնարհութենէ մը զատ ոչինչ կրնայ ընել մարդկութի նը: Մասնաւորելով մեր խօսքը, լոյսը՝ ամէնէն կենսականը մեր գոյութեան համար, պատճառ մըն է լոկ, որ մեր տեսողական գործարանին վրայ ազդելով, յատկանշական զգացողութիւն մը կը ներգործէ մեր ուղեղին վրայ և արդիւնքը յայտնի է:

Մարմիններուն ցոլացումն է պատճառը, որ մենք կարող կ'ըլլանք տեսնելու արեւէն եկած լոյսը. եթէ արեգակին մինչև մեր աչքը գտնուած միջոցին մէջ, գոյութիւն չունեմային հիւլէական այն մանրադէտով տեսնուելիք մասնիկները, ժողովրդական բառով՝ օդին մէջ առկա փոշիները, մեր աչքը անկարող պիտի ըլլար տեսնելու լոյսը, որ արեւէն կուգայ. այդ հիւլէական մասնիկներն են որ լոյսի ճառագայթները կը ցոլացնեն և տեսանելի կ'ընեն զանոնք: Հետեւաբար այն լոյսը, որով մեր աչքը կը տեսնէ, ցոլացեալ *réflection*) լոյս մըն է և ճերմակ կ'երեւայ մեզի: Իրականին մէջ սակայն ճերմակ չէ. ան բաղկացած է եօթը գոյներէ: Ժիրանի գօտին պէս, և այս եօթը գոյներուն խառնուրդն է որ սպիտակ լոյսը առաջ կը բերէ: Երկու շատ պարզ փորձեր ցոյց կուտան լոյսին տարբադադրութիւնն ու համադրութիւնը: Ամէնքնիս ալ տեսած ենք որ ջահերու պրիսմակները (*prisme*, ավիդէ), երբ արեւի ճառագայթ մը անցնեն իրենց մէջէն, կը բեկանեն զայն և երկներանգ ժապաւէնի մը պատրանքը կուտան մեզի՝ շուրջերնիս գլուխուած կարասիներուն վրայ ծիրանի գօտի մը գծելով: Այս երեւոյթը շատ լաւ կը բացատրէ մեզի լոյսին տարբադադրութիւնը, և այդ ծիրանի գօտին մէջ որոշակի կրնանք տեսնել կարմիրը, նարնջագոյնը, դեղինը, կանաչը. կապոյտը լիակազօյնը և մանր շակագոյնը, եօթը տարբեր և յաջորդական երանգներ՝ գեղեցիկ առադրութեամբ մը չղթայուած:

Փաշով համադրութեան, Նեւտոն, նշա-

նաւոր բնագէտը: շատ պարզ կերպով ապացուցած է թէ վերոյիշեալ եօթը գոյներն են որ սպիտակ լոյսը կը յորիւնեն. խառաքարաէ բոլորակի մը վրան, համեմատական բաժանումով ներկած է յիշեալ եօթը գոյները և առանցքի մը վրայ արագ դարձնելով այդ բոլորակը, դիտած է որ յիշեալ գոյները կը կորսուին և բոլորակը սպիտակ գոյն մը կ'առնէ: Խնդիրը սակայն գոյներուն վրայ չէ հոս, այլ այդ գոյներուն լուսեղէն յատկութիւն մը ունենալնին է, որ տեսանելի է մեր աչքերուն: Մինչև հոս նոր և հետաքրքրական բան մը չունի լոյսը և կամ գոնէ շատ գաղտնապահ է ան, որ մինչև ասկէ ութ—տասը տարի առաջ կը ծածկէր իր հիւանայի պէսպիսութիւնը՝ դիտուններու խուզարկու նայուածքներէն: Սակայն օձիքը ձեռք տուաւ հիմայ: Վերջին քանի մը տարիներուն մէջ, բաց ի վերոյիշեալ տեսանելի լոյսէն գտնուեցան նաև երկու տարբեր լոյսեր ալ, որոնք անտեսանելի են:

1. Սովորական լոյսին կարմիր գոյնէն անդին, կարգ մը անտեսանելի ճառագայթներու գոյութիւնը հաստատուեցաւ ու այս անտեսանելի ճառագայթները, որոնք կոչուեցան կարմիրէն վար նաւագայթներ (*rayons infra rouges*) իրենց ներկայութիւնը ցոյց կուտան, ո'չ թէ աչքին՝ այլ զգայուն ջերմաչափի մը սնդիկին կամ ալքոլին վրայ ազդեցութիւն ընելով: Այս ճառագայթները պրիսմակին միջոցաւ նուազ կը բեկանին քան սովորական լոյսի շառաւիղները և ջերմութեան հետ ընկերացած են:

2. Նոյնպէս սովորական լոյսին մանիշակագոյնէն անդին գտնուեցան ուրիշ կարգ մը ճառագայթներ, դարձեալ անտեսանելի, որոնք իրենց ներկայութիւնը ապացուցին լուսանկարչական ապակիին վրայ ազդելով: Այս շառաւիղները որոնք մանրագոյնէն վեր ճառագայթներ (*rayons ultra-violets*) կոչուեցան, ո'չ լուսեղէն և ո'չ ալ ջերմական յատկութիւններ չունին և պրիսմակէն ցոլանալով ամէնէն շատ կը բեկանին:

Ուրեմն, որոշակի կը տեսնուի թէ աչքը, որ սովորական լոյսէն կը մտնի և առանց

անոր չի կրնար տեսնել, բնաւ կարող չէ զգալու վերոյիշեալ երկու տեսակ անտեսանելի ճառագայթները, զորս շատ դիւրաւ կարելի է ճանչնալ ջերմաչափով և լուսանկարչական ապակիով: Սնդիկն ու քիմիական բաղադրութիւնը ուրեմն կը պարունակեն այն ամենակարեւոր յատկութիւնը, զոր աչքը չունէր դժբաղդաբար, անտեսանելի լոյսերը գտնելու, անոնց ներկայութիւնը ստուգելու համար:

Շառաւիղներու տեսակները այսչափով չեն վերջանար սակայն. անոնց թիւը օրէ օր աճելու վրայ է: Հէրց, որուն կարեւոր օժանդակութիւնը վայելած է անթել հեռագիրը՝ հեքցեան ալիքներ անունով, ելեկտրականութիւնն ալ լոյսին հետ նոյնացուցած է՝ ապացուցանելով որ այդ դօրութիւնն ալ տեսակ մը ճառագայթ է անտեսանելի, որ կը բեկանի և կը ցոլանայ: Վերջապէս Ռէօնթէնի ճառագայթները, Ք. անունով ճանչցուած, հինգի կը լրացնեն ճառագայթները, առանց հաշուելու Ռատիոֆի և Ն. ճառագայթներուն տեսակները, որոնց վրայ խօսած ենք արդէն մեր նախորդ յօդուածներուն մէջ:

Այսպէս ուրեմն իւրաքանչիւր շառաւիղ իր արդիւնքին զանազանութեամբ, իր գործած ազդեցութեամբն է որ կը տարբերի: Ոմանք ջերմութիւն, ոմանք լոյս, ոմանք քիմիական ազդեցութիւն առաջ կը բերեն. ոմանք ալ, ինչպէս Ք. ճառագայթները, ի մէջ այլոց, իրենց քափաճցող յատկութեամբն է որ կը յատկանշուին(*): Ամէն մարմին, գիտենք որ, նոյն թափանցականութիւնը չունի, կարմիր ապակին՝ կարմիր լոյսը միայն կ'անցընէ իր մէջէն և սպիտակ լոյսի ճառագայթները կ'արդիւնէ անյնկ: Սնդոյն ապակիները, որոնցմէ սովորական լոյսը կրնայ անցնիլ, կ'արգիլեն սակայն infra—rouge և ultra—violet կոչուած ճառագայթները, առաջինները ծանօթ իրենց ջերմական՝ իսկ վերջինները իրենց քիմիական արդիւնքներով:

(*) Ք. ճառագայթները չեն բեկանիր և չեն ցոլանար, մինչդեռ ultra—violetները կը բեկանին և կը ցոլանան:

Ընդհակառակը, մետաղներէն արծաթը, որ անթափանց նկատուած է տեսանելի ճառագայթներուն համար, կարգ մը ultra—violet լոյսերու (անտեսանելի) համար բաւական թափանցիկ կը դառնայ, անանկ որ կարելի կ'ըլլայ արծաթագօծ ապակիէ տուփի մը մէջ դրուած առարկաները լուսանկարել դուրսէն ինչ որ անտեսանելին լուսանկարումը կը հաստատէ, զոր Ռէօնթէնի դիպուածով կրցաւ գտնել:

Ինչ որ ալ ըլլայ ճառագայթներու արդիւնքը, սա ճշմարիտ է որ ներքին գլխաւոր պատճառ մը գոյութիւն ունի այս երեւոյթներու զանազանութիւնը բացատրող, որ թէ և ենթադրութեան վրայ հիմնուած է, սակայն այդ ենթադրութիւնը առ այժմ հարկաւոր է եթէ ոչ ճիշդ, մեկնելու համար բոլոր այս երեւոյթները որոնց համար մարդուն իմացականութիւնը բաւականէն աւելի յոգնած է: Այս ենթադրութիւնն է ընդունիլ թէ եթեր (ether) ըստած շատ թեթեւ, նուրբ միջավայր մը կայ, որ մշտնջենաւոր թրթռուցման վիճակի մէջ է: Մարմնոց մոլեգիւլները այս եթերին միջոցաւ իրարու հետ կապուած են, որպէս թէ առաձիգ կապով մը կապուած ըլլային. ու այս կապն է պատճառը որ երբ մոլեգիւլ մը թրթռայ եթերին մէջ, շարժումը եթերին կը հաղորդուի և ալիքներու պէս արագօրէն կը յառաջանայ ու կը տարածուի այդ խիստ նուրբ միջավայրին մէջ(*): Հետեւաբար թրթռացումը շարժում կ'ենթադրէ և շարժումէն կը ծնի աբսոլյուտ թիւը նիւթին մէջ, զոր կը տեսնենք: Լոյսը, ջերմութիւնը եւ ելեկտրականութիւնը աբսոլյուտեան տեսակներ են, բայց զանոնք արտադրող շարժումները, իրենց բնութեամբ և արագութեամբ անտեսանելի են մեզի:

Լոյսը ուրեմն եթերին մասնաւոր մէկ թրթռացման հետեւանքն է:

ՆՈՒՊԱՐ

(*) Լոյսը արեւէն մինչև մեզի հասնելու համար, մէկ երկվայրկեանի մէջ 300,000 քիլոմետր արագութեամբ կ'ընթանայ: Ելեկտրականութեան արագութիւնը դեռ չէ ճշդուած. գործածուած չափերը մօտաւորապէս ընդունուած են:

ԳԻՍՈՒԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՐԻԻՐ ՈՍԿԻԻ ՀԱՄԱՐ

(ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՍՆԵՔԷ)

Նեղ, խորաուրորտ, քարայտառակ փողոց մը դարձեր, որուն վերի ծայրէն առու մը կը գլգլայ տուններու և ածուներու մէջէն։ Անկանոն տուններու շարք մը երկուստեք, երբեմն փոքրիկ ածուներով շրջապատուած։

Հոն՝ վերը՝ կոկիկ նորաչէն տունի մը մէջ կը բնակէր Թորոս աղան։ Ունէր քառասուն նոց կին մը, և մանչ մը ու աղջիկ մը։ Տըղան քսան տարու՝ պիտիք դեռ նոր սկսած էին մրտախէ։ Կիրակոս էր անունը։ Դպրատունէն միշտ կը փախէր։ Այդ նեղ մթնոլորտը սիրած չէր երբեք։ Վարժապետը շատ աչխատած էր ատենօք, բայց ինչօգուտ, ջուրը ծեծէ ծեծէ դարձեալ ջուր, ինչպէս կ'ըսէր տեղային առածը։ Հայրը ալ չէր խօսէր, որովհետեւ խօսելէն խօսելէն բերանը մազ բռնած էր խեղճին։ Յամառութիւնը ա'լ աւելի կը շեշտուէր։ — Չեմ կարդար, կը պոռար տղան, ամէն անգամ որ զինքը քիչ մը սեղմէին։ Հայրը, ինքը, խորունկ կարդացող մը չէր, ու կը կարծէր թէ տղան եթէ կարդալ գիտնար, շատ հարուստ պիտի ըլլար։ Իր դիզած ոսկիներուն կրկինը բարդուած տեսնել կը փափագէր։ Դիզելու բուն ճիգ մը որուն մէջ կը դնէր երազուած երջանկութիւնը։ Բայց եկուր Կիրակոսին հարցուր, աշխատիլ, միտքը չարչրկել, որքան հեռու իրմէ։

Դէմքով այնքան գեղեցիկ չէր, կախ չըթունքներէն յաճախ լորձունք կը հոսէր, մանաւանդ երբոր քանի մը բառեր լիբտէր։ Օրն ի բուն, էգիները, լեռը ձորը ու կէօլը (ջրչեղջարան)։

Ամբան տաքին ուրիշ տեղ փնտռելու չէր զինքը։ — Կէօլը, այսպէս կ'ըսէին գիւղացիք այդ ջրամբարին որ այգիներու ոռոգման համար յատուկ շինուած էր։

Գեղը՝ երկու դէմ առ դէմ բլրակներու կուշտը ու ձորակին մէջ շինուած տուններով ամփիթատրաձև տեսք մը ունէր մրգաստաններով բոլորուած։

Գոյրը՝ Սաթենիկ՝ որ տարու մը միայն մեծ էր իրմէ, նշանած էին անագագործի մը որ գեղանները կ'երթար ու կ'ապրեցնէր տունը մայր, քոյր, եղբայր։ Լուրջ տղամարդ մը, որ հարուստ աներ մը ունենալուն համար գոհ էր ու զուարթ։

Թորոս աղան ջերմեռանդ խանութպան մըն էր։ Առտուն կանուխ ժամ չը գացած չէր բանար խանութը։ Պարապ ատենը միշտ Նարեկ կը քաղէր ու Սաղմոսը գոց դիտէր։ Իրիկունները միշտ քովը կ'առնէր տղան ու խրատ կուտար, եթէ ան ալ ճանաչ բռնելէն ժամանակ գտնէր մտիկ ընելու։

— Աղա՛ապա, քոյրս վաղը տալի ես, ալուկս (մայրս) ինչ էնելի է մինակ

Մէկ հատիկ էր, մայրը կը գուրգուրար վրան, հայրն ալ ինչ ընելիքը չէր գիտէր։ Կուղէին նշանել, բայց տղուն խելքին պտուկը ճաթած էր։ Խանութ ունէին, կը նոստեցնէին զինքը, որմէ ուղէին՝ կրնային առնել աղջիկ մը, բայց Կիրակոս գիր չունէր, խելք՝ բնաւ։ Գոնէ առնելիքը տալիքը գրեւոր չափ գիտնար, ան ալ խիստ թերի էր։ Իր խեղճութեամբ խօսքերը, անուր հայհուջները շուկացիներուն զբօսանքն էին, որոնք խանութէ խանութ պտտուելով կը խօսեցնէին զինքը ու կը խնդային։

«Ո՛ո, հարդ հարուստ է, հոգդ անգամ մ'ըներ»։ Աս խօսքը բաւական էր տղան ա'լ աւելի գրգռելու։

Նախանձը կը կրծէր զիրենք, երբ Թորոս աղային խաղաղիկ վաստկելը կը տեսնէին։ Ոսկիները կը բարդուէին, մինչդեռ իրենք հաղիւ ծայրը ծայրին կրնային ապրիլ։

Դիւղը փոքրիկ շուկայ մը ունէր յիսուն վաթսուն տունէ բաղկացած։ Տեղացիք գեղին մեջը կը յորջորջէին շուկան։ Թորոս աղան շատ սիրուած էր շուկացիներէն, որովհետեւ շատ մը նիւթական հեղութիւններ կը պարտկէր։ Սարգիս աղան, գեղին ջոջերէն

մէկը, ատեն ատեն իր խանութը կուգար կը նստէր իրմէն առուտուր կընէր ու ղիկքը կը պաշտպանէր գեղջկային վէճերու մէջ:

Օր մը, շաբաթ օր մը, երբ առանձին կը նստէին, աղային աղջկանը խնամի եղաւ: Աղան պահ մը մտածելէն ետքը, հաւանութիւնը տուաւ մտերմօրէն ու «բէք աղէկը» ըսաւ: Թերեւս մտածած ըլլար թէ՛ փոքացուին հայրը հարուստ էր, և աղջիկը հանգիստ պիտի ըլլար, քանի որ տունին մէջն ալ բաղմունքիւն չիկար: Իր մտերի՛ը երկիւղած մարդ մըն էր. անշուշտ պիտի գուրգուրար հարսնացուին վրան: Չէր մտածեր խեղճը թէ տղան՝ որ դեղեցիկ չէր, խելօք ալ չէր, հակառակ Աննային գեղեցիկութեանը որուն վարդապետն այտերը լոյսի պէս փառփառ կը վառէին:

Իրիկունը կնոջը՝ Սուրբիկին ըսած էր աղային հետ գործը մնացունելը: Խեղճ մայրը ուրախութենէն կը խենթենար: Աղան իրենց աղջիկ պիտի տար: Որքան պիտի սիրէր հարսնացուն, ըսելու հարկ չկար: Պուպրիկի մը պէս պիտի փայփայէին Աննան, սակայն կիրակոս, իրենց ապրուշը: Կը խելոքնայ, կ'ըսէր Սուրբիկ հառաչ մը արձակելով ու աղջկանը վրայ նայելով որ ան տարին հարս պիտի ըլլար: Անուշիկ հեղիկ գեղջկուհի մը, կիրակոսին հակապատկերը: Տան տիկին մը, խելօք, պարկեշտ, ջանասէր, Հօրենական հարստութիւնը պիտի թողուր ու անապագործի մը հարաւ պիտի ըլլար: Եղբայրը կը ծաղրէր զինքը: Աղջիկը կուլար ու կը յանդիմանէր: Կիրակոսին հոգն էր:

Աղան, ամիս մը ետքը, հարիւր ոսկիի պէտք ունեցաւ: Փրնթի մարդը, քսան լիւրանոց խանութի մը մէջ, հարիւրներով ոսկի գիւղած էր: Այդ փոքրիկ խանութին մէջ, թէ՛ չուկացիներուն և թէ՛ գիւղացի կնիկներուն աղին ամանն էր վախառու մը՝ իր կամացուկ մարդուկի Դոլով՝ որ կը շահագործէր թէ դրամը թէ լիւրանը: Կնուրտիք ամէն անգամ որ կիրակոսին խօսքը կը բացուէր, անէծք կը տեղացիներն, խեղճերը անցուցած ճգնաժամին գիտէին, այդ կամացուկէն ստակը փրցունելով նեղութիւններն մինչև անցունէին:

Աղան խնամիցուէն ստակը ուղած էր: Թորոս աղան մէկ խօսքը երկուք ըրած չէր, սչ մուրհակ և ոչ ալ ստորադրութիւն: Աղջիկը պիտի առնէր: Նշանը պիտի կարդացուէր եկեղեցին: Տէրտէրը եկած տարած էր դաճեալն ու հինգնոց երեք ոսկին: Մարդը, սակայն, քիչ մը մտմտաց ու ըսաւ ինքնիրեն. «Եթէ աղան չդարձունէ ստակը, հարսնացուն չատ սուղի պիտի նստի»: Հապա կիրակոսը, կուտ մը կարծէր:

* *

Թորոս աղային աղջիկը Սաթենիկ հարս եղած ու կիրակոս ալ խանութ նստած էր: Ծուկան՝ որ վրան բաց խօսուըռտուըր կայարանը ու գեղին պարկեշտ ու անպարկեշտ արարքներուն քննարանն էր, կը խօսուէր միշտ կիրակոսին նշանտուըրն վրայ թեր ու դէմ: Արդէն անիկա խանութ երթալով կ'օգնէր հօրը. բնա՛ւ: Սըվոր նըվոր խանութը, չուկան, աղտոտ չաղփաղփանքներու դերակատար մըն էր: Խանութպաններէ ոմանք նա խանձով, ոմանք ալ լոկ ժամանցի համար, փոխանակ խրատելու տղան, ա՛լ աւելի թըռուցիկ մը ըրած էին դայն: Ոչ կոխած տեղը գիտէր և ոչ ալ ըսած խօսքը:

Աղան կարեւորութիւն չէր տար եղածին, դէթ այնպէս ցոյց կուտար ինքզինքը, և սակայն դթոտ ակնարկներ կը նետէր փոսացուին վրայ որ կաթ թափած կատուի պէս բարեւ բռնած կը ներկայանար իրեն, երբ խանութ գար:

Հայրը կը կրկնէր միշտ.— Տղա՛ս, վարժապետը իրիկունը տուն թող գտայ ու քեզի քիչ մը գիր սորվեցնէ:

— Չեմ ուզեր, կըսէր, ու երեսը ծամածուելով խանութէն դուրս կը նետուէր:

Կարդա՛լ, որքան դժուար կիրակոսին համար:

Անոր կարգալիքը Աննան էր: Տանիք կը ցատկուտէր տեսնելու համար զինքը: Պատուհանն էր, աչքը հոն կը դնէր: Դո՛ւռը ելած էր, կամաց մը կ'անցնէր հոնկէ: Աննա, իրաւ շնորհալի աղջիկ մը, քսան կիրակոս կ'արժէր: Խելացի, պարկեշտու քիչ մըն ալ ուսումնասէր էր: Հայրը Թաղական եղած

ատեն, աղջիկներու վարժապետ մը բռնած էր ու անկէ քիչ մը բան սորված էր: Հարկ չկար արդէն կարգալու, մայրը եփած էր զինքը տնարարութեան մէջ: Ու փորձառու կնոջ մը պէս կը վառէր, կ'եփէր, կ'աւլէր, կը շտկէր: Մեղուի պէս ժիր, արշալոյսի պէս փայլուն: Գանգուր մազեր, ծաւի աչքեր, կլոր երես մը, ձիւն ճերմակ վարդախառն խնձոր այտերով: Ամէն անգամ որ ձեռքերովը մազերը ետին կը հրէր, հրաշալի գեղեցիկութեամբ հետ կանաչի հրապոյրները կիրակոսին խելքին պտուկը կը ճաթեցնէին: Այսքան ալ անյարմար միութիւն խելքէ միտքէ չէր անցնէր:

* *

Գեղին տղամարդերը ակօայ կը կրճտէին կը նախանձէին ապուշին բաղդին վրայ, որովհետեւ իր տգեղութիւնովը ու տիմարութիւնովը չնորհիւ հօրը ոսկիներուն չնորհադեղ հորի մը կը տիրանար: Պիտի վայելէր խնձորին աղուորը խողերուն կեր կ'ըլլայ, կ'ըսէին զայրոյթով:

Բայց կիրակոս հոգն անգամ չէր ընէր, ու կը շարունակէր իր շաղակրատութիւնները: Աղան՝ աներ, ոսկին՝ հայրը, Աննան՝ իրը, ալ ինչ կուզէր:

Մայրը տղուն այս վիճակը տեսնելով կ'արգահատէր ու կը հառաչէր. ինչ պիտի ըլլայ, կ'ըսէր, այս խեղան. կինը պիտի համակերպէր, երեսին պիտի խնդա՞ր, խնդիրներ որ սիրտը կ'անձկացունէին:

— Ալո՛ւկ, հոգ մ'էնիր, երեսդ կը ճերմկցնեմ, խեղալուս մի՛ հէյր:

Հէք ապուշ, կը կարծէր թէ եզինքը ծիրան գողնալ, լեռ սար թափառիլ, կեօլը լուացուիլ եւ կնիկ առնել միեւնոյն բաներն են:

Ու ինչ բանի պէտք ունէր, ու տելիք չատ, խմելիք չատ, ոսկի չատ:

Անշուշտ պիտի սիրէր Աննա զինքը, երբոր արեւելեան գորգերով զարդարուած սենեակին մէջ երկու հատ իրարու վրայ փռուած բուրդ անկողինները տեսնէր, պիտի հիանար հարսը, քանի որ հիմակունէ իր բերին ջուրերը կը վաղէր:

— Ի՞նչ աղուոր տղայ մը առնելի է այդ քածը:

— Տղա՛ս, մ՞ըսի, չիւտիւ անոնք քիպար կ'ըլլին, կ'ըսէր հէք մայրը հառաչելով:

— Քիպար, ինչ ըսել է քիպար, ես քիպար չե՞մ, այսքան լիրաներուն մէջը ո՞վ քիպար չըլլար:

Շուկացիները միտքը լեցուցած էին ոչնչութիւններով, կինը աչքին բան մը չէր երեւար, ստրուկ մը. կոյր համակերպումի արձան մը:

Մէյ մը ձեռքը անցընէր, զիտէր ինչ ընելիքը, կատուն պիտի պատռէր:

Ապագան խորհիլ, միտքէն անգամ չէր անցընէր:

Այս էր մօրը խղճահարութեան շարժառիթը: Տղան միամիտ, աղջիկը աղայի աղջիկ: Անգամ մը որ բերէին, պիտի հաւանք մօրը եփածին: Պիտի հանդուրժէ՞ր հօրը փնթիւթեանը: Աննա՛ որ հօրը տունը վեհանձնութիւնով խառն գուրդուրանք մը վայելած էր, ընկերակցներուն մէջ միշտ յարգուած ու սիրուած, միեւնոյնը պիտի գտնէ՞ր փեսին տունը:

Աննայի հայրը՝ Սարգիս աղան՝ թէ է գեղին աղան էր, բայց քիչ մը ինկած էր կ'ըսէին, իրեն առատաձեռնութեան և գործերուն ճախողութեան պատճառով: Հարիւր ոսկին չունէ մը առնել տուած էր իրեն, զինքը անուանարկող պարտքէ մը ազատելով: Խօսք խօսք էր, տուած էր աղջիկը: Ուրիշ երեք աղջիկներ ալ ունէր զորս հարուստ տեղեր հարս տուած էր: Անոնք կը վայելէին կեանքը լիութի պարգեւներովը: Սիրտը չէր բաբախէր անոնց համար, խիղճը հանդարտ էր: Բայց Աննան քիչ մը միտքը կը շարչրկէր, թերեւս հարիւր ոսկիին զոհ ըլլար աղջիկը: Խղճահարութիւն մը որ խորապէս կը խոցէր սիրտը: Եւ սակայն կնոջը խօսք չէր բանար:

* * *

Կիրակոս կարգուեցաւ ու կերաւ անուշապուրը: Խանութը, հօրը քովը, կը շարունակէր գործին: Բայց բնաւորութեանը վրայ երբեք փոփոխութիւն մը չկրեց: Միեւնոյն ամիսը, շուկացիին զբօսանքը: Իր ամուսնական ներքին կեանքը բերնէ բերան կը շրջէր: Միտը կրծել չէր տար սակայն Աննա:

Երբեք երես չէր տար թեկնածուներու ու ցոյց կուտար իր վեհանձնութիւնը ամէն պարագայի մէջ։ Իրեն համար չէր մոլորանքը։ Հօրը մօրը պատիւը ամէն բանէ վեր կը դասէր։ Չէր խաբուէր ոչ քծինքէ, և ոչ ալ քաղցրախօս շողովներէ։ Հասկցած էր թէ չպիտի կրնար վայելել քոյրերուն երջանկութիւնը։ Մեր ապուշը որ առաջ կը պարծենար թէ չուտով պիտի սանձէր իր կէսը, սանձուած էր անորմէ ու քովը ծառայի մը նման հազիւ կցկտուր խօսքեր կրնար արտաբերել։ Դերին էր գրեթէ, կարծես թէ աներպապն էր դէմինը։ Աննա կը սաստէր զինքը ամէն անգամ որ թուրքերանութիւն ցոյց տար։ Առանց կնիկանը երեսը նայելու, չէր կրնար խօսիլ ուրիշ մը հետ։ Թէպէտ կը վայելէր ամուսնական յարկին երջանկութիւնները, բայց միշտ սեղմուելով ու քաշուելով՝ օր ըստ օրէ կը տկարանար ու ալ աւելի կը պակսեցնէր խելքը։

Աննա ստիպուեցաւ քաշուիլ ժամանակ մը հօրը տունը, տեսնելով էրկանը նիհար ու մոլար վիճակը։ Սիրտին հառաչները կուրծքին մէջ կը խեղդէր, այն կուրծքին՝ որ բեղմնաւորութեան սիրասուն հմայքով լեցուն գեղեցկութեանը վրայ տարբեր շնորհ մը կ'աւելցունէր։ Հօրը տունը, ջովի առն, մայրն էր որ աչք կը գոցէր աղջկան թերութիւններուն, ամէն անգամ որ ազգականներէն իրենց ծառայող վառվռուն երիտասարդ Տիրանին հետ քաղցր ժամանցներ կ'ուսննար, երկուքն ալ արբէիւ՝ վարդաղօծ տարիքի մը էն զգլխի տարփոտ հրապոյրովը։ — Ախ, ստակ, գետինն անցնիս, կըսէր յիսնամեայ մայրը տեսնելով աղջկանը չարչրկումները։

Հէք մայրը սրտածմլիկ անձկութեան մը, անտանելի կացութեան մը մասնուած էր։ Չէր կրնար խօսիլ, կը փղձկէր ու կուլար։ Չուզելով զգացնել աղջկանը իր տխրութիւնը, դուարթ կ'երեւար միշտ որպէս զի մեկամաղձութիւնը չպատէ իրենց ձեռքովը ակամայ այս վիճակին մասնուած հէք աղջիկը։

— Ինչ ունիս, մայրիկ, կըսէր աղջիկը երբ մօրը տոմուկ աչքեր կը դիտէր։

Ինչ չունէր խեղճ կինը, տաանը ինը տարուան իր գեղահարաչ աղջիկը ապուշի մը կինը եղած էր, ա'լ ինչ ունենար։

Ու թոյլ կուտար Տիրանին որ միշտ գայ ու Աննան քիչ մը մխիթարէ, ամօքէ ցաւերը։ Ութը ամիս եղած էր հօրը տունը վերադարձը։ Փեսան ապաքինած չէր, երեսը գոյն չկար և բժիշկները կ'արգելէին մօտենալ կնոջը։

Կիրակոս միեւնոյն ապուշն էր։ Փոխանակ հիւանդութիւնը օրէ օր վրայէն նետելու, անխոհեմութիւններով ալ աւելի կը ծանրացնէր։ Հայրը շատ մտահոգ էր, կարծես անյուսութիւն մը ծանրացած էր սիրտին վրայ։ Միամիտ մայրը ինչ ընելիքը չէր գիտէր ժամ առաջ դանի առողջացնելու համար։ Խնամիին երեսը չէր կրնար նայիլ։

— Ախ, ինչ տանջանք, Աստուած իմ, հծծեց անգամ մը որդեսէր մայրը, դառնալից արցունքներով, որոնք իր քառսուննոց կայտառ կնոջ այտերուն վրայ երբեմնի գծուած խորշուները կը զեղուին արծաթափայլ։

Շատ չտեւեց խեղճ մօր սրտամորմոք վիճակը։ Կիրակոս անկողին ինկած էր, կը հազար։ Ուրկէ՞ էր այս հազը, կրծող, հիւծող, մաշող, սպառող։ Ամիս մը ետքը խօսելու ալ կարողութիւն չունեցաւ։

Չմեռը, դաշտերու ձիւն ճերմակ պատանքին հետ պատնուեցաւ Կիրակոս, ու տարին թաղեցին զինքը։ Հէք տղան օձիքը չէր կրցած ազատել սոսկալի հազէն։ Աչքը բաց տարին զինքը գերեզման. ըղձանքին չէր հասած։ Թորոս աղան ու կինը կուլային ու Սաթենիկ՝ մէկ հատիկ աղջիկին, քովերնին նստած, սպիտակ թաշկինակով մը կը սրբէր արցունքները մայրիկին ու հայրիկին որոնք կարծես մխիթարուիլ չէին ուզեր։ Խենթ— խելար, ինչ որ ալ ըլլար, իրենց մէկ հատիկը կուտային հողին, ու կ'ողբային անմխիթար։ Մանկամարդ այրին ալ պիտի լար այդ պահուն, եթէ Տիրան թողուր զինքը։ Ճերմակ թաշկինակով մը սրեց արցունքը Աննային, հրատոյժոր շրթունքները զրոյմելով տամկացած վարդ այտերուն վրայ։ Սգաւոր այրին իր թախիծին մէջ, առաջին անգամն էր որ այդ տենդոտ համբոյրներուն տակ զգաց հոգւոյն

Թրթռումները: Ամուլ ասուլին մահը ար-
դենաւորեց նոյն պահուն քողամերկուած
սէրը, բեղուն կեանքի մը յաղթանակը շնոր-
հելով սիրակցորդ ամուլին:

Գեղին մէջը ուրկէ առուն կը հոսի գըլ-
դըլ, փոքրիկ տուն մը կայ նորաշէն: Հոն՝
այդ տունը կեանքոտ ճվլտուք մը կը լսուի:
Երեք կայտառ ոստոստուն մանկտի կը շէն-
ցունեն խաղաղիկ բնակարանը: Տունին
առջև տնկուած է ոստախիտ ուռենի մը որուն
գովացիկ շուքին տակ կը հանգչին պահ մը
տօթակէզ անցորդները: Աննան է տան մայրը
ու Տիրան՝ հայրը: Աղան շնորհած է ա-
նոնց այդ սիրոյ բոյնը ու ամէն օր ան-
գամ մը կ'այցելէ տնտնելու համար աչ-
քովը աղջկանը երջանկութիւնը զոր ծախած
էր ատենօք հարիւր ոսկիի: Այրին մոռցած
է առաջին ցաւը, վերջին երջանկութեան
փրփրոտ ու ծփծփուն կոհակներուն մէջ:

Անդին, Թորոս աղային տունը անագագործ
փեսան կը շէնցունէ հիմա: Վիշտերու տակ
կքած որդեկորոյս ծնողքը այսօր իրենց աղ-
ջկան խնամքը կը վայելեն սիրադեղուն
բայց միշտ սրտուեր:

ՇԱՀԱՐԱՒԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

25^{րդ} արեւելքան

Վարժարանը, իր 25ամեակին առիթով
վերակազմուած նոր և լաւագոյն կարգադ-
րութիւններով, կը բացուի Դ. օր, Սեպտ.
7ին (Ն. Տ.): Առեւտրական ուսումներ մեծ
տեղ մը կը բռնեն բարեփոխեալ Ծրագիրին
մէջ: Վարժարանին ուսմանց ընթացքը վե-
ցամեայ է, 2 տարի նախապատրաստական,
և 4 տարի ալ Վարժարանական կարգերու
համար: Ուսուցչական Մարմինը կը բաղկա-
նայ հմուտ և փորձառու ուսուցիչներէ, ո-
րոնց 5ը գովէճներու ընթացաւարտներ են,
և 1ը համալսարանական մը: Առողջական
տեսակէտով՝ Վարժարանին դիրքը անպու-
գական է: Իր յատուկ բժիշկը մօտէն կը

հսկէ աշակերտներուն առողջական վիճակին
վրայ: Տնօրէնը և ուրիշ 4. գիշերօթիկ ու-
սուցիչներ, որոնք վարժարանին շէնքին մէջ
կը բնակին, մօտէն կը հսկեն աշակերտներուն
վարք ու բարքին վրայ: Վարժարանին տա-
րեթոյական է 16 օամ. ոսկի, որուն կէսը
Սեպտ. 1-ի սկիզբը վճարելի է, և միւս կէսը՝
Յունվ. 1-ի վերջերը:

ՄԱՆՈԹ.—Կ. Պոլսէ եկող հին և նոր
աշակերտները կրնան կէս գինով Հայտար-
Փաշայի երկաթուղիով Իզմիտ գալ, դիմելով
մինչև Օգոստ. 18/3, Պայպըլ—Հաուս, Դրի-
զոր էֆ. Շահպաղեանի: Վարժարանին նոր
յայտագիրը ստանալու համար դիմել Մր.
Ո. Ո. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պոլիս:

4—10

Ն Շ Ա Ն Ա Ն Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

—*—*—

Անցեալ կիրակի, Սկիւտար, Կարապետ
էֆ. Փափագեանի բնակարանը, մտերմական
չըջանակի մէջ կատարուեցաւ Յակոբ էֆ.
Պապեանի նշանախօսութիւնը Օր, Զապէլ Կ.
Փափագեանի հետ: Պապեան էֆ., որ կա-
րեւոր դիրք մը ունի Բրէտի Լիօնէի մէջ՝
Իբրև պետը արժէթղթոց ճիւղին, այդ Դրա-
մատան վարիչներուն ու բոլոր զինքը ճանչ-
ցողներուն համարումն ու համակրանքը դրա-
ւած երիտասարդ մըն է, կենցաղագէտ, բա-
րեհամբօյր ու ազնիւ: Իր խօսեցեալը, Օր.
Զապէլ, դուստր Կարապետ էֆ. Փափագ-
եանի, Սկիւտարի աղջկանց Ամերիկեան վար-
ժարանին մէջ խնամեալ դաստիարակութիւն
մը ստացած է և օժտուած շնորհալի ձիրքե-
րով:

—*—*—

Մուշեղ վարդապետի Դրուագներուն վրայ
ստացած ենք ղեղեցիկ յօդուած մը Ենովք
Արմէնէ, զոր պիտի հրատարակենք յաջորդ
թիւով:

ՍՏԱՅԱՆՔ Բարգէն վարդապետի Տուա-
քիքապը գործը, հայերէն գրով ու թուրքե-
րէն լեզուով թարգմանութիւն Աղօթագիրքին
(Երկրորդ տպագրութիւն):

Հանգուցեալ Մարտիրոս էֆ. Թօքատեանի մարմինը Կ. Պոլիս փոխադրելու համար ճամբայ հանուելէ առաջ, մեռելական արարողութիւն մը կատարուեր է Մանչէսթըրի եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Տ. Գէորգ եպիսկ. Իւթիւճեանի որ հակիրճ դամբանական մը խօսեր է։ Ոչ միայն Մանչէսթըրի հայ համայնքը, այլ առեւտրական ու սեղանաւորական հաստատութեանց պնդիւնացիներ կայացուցիչներ, գործարանատէրեր և ուրիշ պատուաւոր օտարազգիներ, ինչպէս նաև տեղւոյն օսմ. հիւպատոսը, ներկայ գտնուեր են։ Կրօնական արարողութիւններէն ետք, անգլիերէն լեզուով բանախօսութիւն մը արտասաններ է Գառնիկ էֆ. Ֆնտգլեան, — Մանչէսթըրքանակ զբաղէտ վաճառականը, — պատկերացնելով հանգուցելոյն գրաւած կարեւոր դիրքը և ընծայած բազմադեմի օգուտները՝ առեւտրական հրապարակին վրայ, ինչպէս նաև բարեսէր զգացումները, և այս առթիւ յիշելով Մանչէսթրի հայ վաճառականներուն իրարու նկատմամբ ունեցած ազնիւ վերաբերումը։

Ներկաներուն ցաւակցութիւնները ընդունելու են հանգուցելոյն եղբայրը՝ Տիգրան էֆ. Թօքատեան և քեռայրը՝ Միհրան էֆ. Կեսարեան որոնք Մանչէսթր ուղեւորած էին՝ Մարտիրոս էֆ.ի մահուան հեռագիրն ստանալով։

Ա.Գ.Դ. — Գաւառական կարեւոր կեդրոններու մէջ երկար տարիներէ ի վեր ՏԵՍՁԻ պաշտօնը յաջողապէս վարող անձ մը, ունենալով ի ձեռին վկայական Ուսումն. Խորհրդոյ և բարւոք պաշտօնավարութեան վկայագիրներ, կը փափաքի մայրաքաղաքիս և կամ գաւառաց ազգ. վարժարանաց մէջ տնօրէնական կամ աւագ ուսուցչի պաշտօն ստանձնել։

Մանրամասնութեանց համար, դիմել Ղաւթի, Սեղբոս խան թիւ 5 Բիւզանդեան Դրատունը, անձամբ կամ նամակով։

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԲԱՆԱԿԱՆ ԹԻ

48-ր. ՏԱՐԵՇՐԱՆ

Վարժարանս վերստին կը բացուի 1/14 սեպտ. 1964.

Վարժարանս «Երկրորդ երկրորդական դպրոցներու» (école secondaire moderne, Realschule) Միջնակարգ պատրաստութեան դպրոցն է։

Լեզուներ. — Հայերէն, Թուրքերէն, Գերմաներէն, Գերմաներէն, Անգլիերէն, Իսպաներէն. — Ուսողանքն, բնագիտական, բնապատմական, պատմական, (կ'աւանդուի Գաղղ. եւ Գերմ. լեզուներով)։

Առեւտրական Աշխարհագր. Թուրքերէն. Թղթակցութիւն (Գերմ. Գաղղ. Անգլիերէն)։

Ուսումնական ջանքեր. — Ներքին եւ արտաքին՝ 20 ուսուցիչներ պիտի դասախօսեն։

Նորամուտ աշակերտաց ընդունելու թիւն Օգոստ. 16էն կը սկսի։

Վ.Ս.Ի.Զ

Զ. ԳԱՐԻԲԵԼ Ծ. Վ ՄԵԼԵՎԻՇԵԱՆ

2 - 10

ԱՂԶԿԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԵՃ

(Ի Ի Ս Կ Ի Ի Տ Ա Ր)

Աղջկանց Ամերիկեան Գուլէճի յառաջիկայ տարեշրջանը կը սկսի սեպտ. 15ին։ Գերմանական աշակերտութիւնները Գուլէճ կը սպասուին 14ին։ Հաստատութեան շէնքերն օժտուեցան կեդրոնական ջեռուցիչով մը, որ մեծապէս կը նպաստէ գիշերօթիկներու վիճակին հանգստաւէտութեան։ Ուրիշ բարւոքումներ ալ պիտի ըլլան տարւոյն ընթացքին մէջ։ Աւելի տեղեկութիւն ուղղորդներ դիմելու են նամակով Գուլէճին նախագահին, կամ Սեպտ. 1էն ետքը անձամբ երթալու են Գուլէճ։ Կը խնդրուի նամակները ղրկել անգլ. նամակատան խմամբով։

2—10

Իբրեւ չարունակութիւն «Հրատարակչական գործը մեր մէջ» խմբագրական նոթին, այս անգամ ալ կը ծանուցանենք թէ Իգմիրցի ծանօթ վաճառական Գարեգին էֆ. Փափազեան, որ գրականութեան մէջ ալ անուն մը ունի իր զանազան գրուածքներովը ու թարգմանութիւններովը, — հայերէնի թարգմաններ է Շէյքսպիրի մէկ թատերախաղը որու մասին սա տողերը կը գրէ Իգմիրէն, աշխատակից մը, Արեւելին. — «Գ. Յ. Փափազեան այս անգամ դարձեալ հրապարակ կ'ելլէ՝ վերջերս հրատարակած իր թարգմանութեամբ որու մէջ թարգմանիչը նոյն խղճամբտ աշխատութիւնը ի գործ դրած է՝ անգլիական բնագրին ոգին նոյնութեամբ պահելու և մաքուր ու դիւրասահ ոճով աշխարհարար մը գործածելու մասին»։ Սոյն բաղմաշխատ գործը թարգմանչին կողմէ նուիրուած էր Մարտիրոս էֆ. Թօքատեանի որ անոր երեւումը չտեսած՝ հրաժեշտ տուաւ կեանքին։

Հաճոյքով կիմանանք թէ Սուրէնեան Տեարց կրտսեր եղբայրը՝ Արշակ էֆ. Սուրէնեան՝ յաջողութեամբ աւարտելով Բարիդի Ատամնաբուժական վարժարանին չրջանը, փայլուն քննութիւն մը անցուցեր և Ա. կարգի վկայական ստացեր է։ Արշակ էֆ. Սուրէնեան թէ՛ տեսական և թէ՛ գործնական դասերու հետեւած էր, և մայրաքաղաքս պիտի գայ իր արուեստն ի գործ դնելու։

ՌՕՊԵՐԹ ԳՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեջրջանը կըսկսի Սեպտ. 2/15ին։ Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար։ Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդնեան և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ։ Մարմնամարդի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ա-

մէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն։ Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր աղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ։

5—10

ՏՈՔԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԸՍՐՈՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ տղայոց հիւանդութիւններ (ներքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, ակաջի և կոկորդի գործողութիւններ։

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ Բերա, Մեծ—փոքր Գրէտի Լիօնէի քով, թիւ 331։

Երկուշաբթի և հինգշաբթի Դատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12. 2—10

ԼԱ ՖՕՆՍԻԷՐ

LA FONCIERE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրդեհի, կեանքի եւ փոխադրութեանց

Դրամագլուխ 60,000,000 ֆր.

Սոյն ապահովագրական հանրածանօթ ընկերութեան կեդրոնական Տնօրէնութիւնը կը գտնուի Բարիդ եւ Դրամատունէն Գրէտի Լիօնէն։

Թուրքիոյ ճիւղին համար Ընդհ. Տնօրէնն է Պ. Սիլվէն Միլ եւ գրասենեակները կը գտնուին Ղալաթիա, Պէրէքէթ խան, Թ. 10—11։

ԼԱ ՖՕՆՍԻԷՐ ապահովագրական ընկերութիւնը՝ ինչպէս հրդեհի և առեւտրական փոխադրութեանց, նոյնպէս կեանքի ճիւղին համար յոյժ նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ իր բաղմաթիւ յաճախորդներուն գորս միշտ գոհ թողուցած է։

Հիմնադիր—Արսոնաէր Կ. Ս. ԻիթիիճեԱն Պասապիանասու—Տնօրէն ՏՈՔԹ. ԵՂ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ՆԱԲԱՆԶԱՆՈՐԶԵՅԱՆ ԱՊԱՀՈՎՍԴՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակում)

ՊԱՏՈՒՍԱՆԱԿԱՆԱՐԻՇԷՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. Բ.

ԴՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդեմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)


Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Այս ընկերութեանց Դրամատեւութիւնն է ի Կ. Պոլիս, Բոքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Դրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56 6-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅՈՒՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, առիւծ ու սովի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

- | | | |
|-----------------------|---|---|
| ՍԻՆԿԷՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ | ԲՆԲՍ | 1. Մեծ փողոց, Պօս Կառլէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ |
| | ԿԱՆԱԹԱ | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ |
| ՊՈԼԻՍ | 1. Սուլթան Համամ, Թ. 120 | |
| | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13 | |
| ՍԻՆԿԷՐ | | 2արշը Պօլս, Թ. 120 |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարեալ երաւեսանորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէր Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵՆԱՌՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կա-

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»
Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- գլուխ եւ վնասուց հատուցում	282,000,000	»
1902 տարւոյ մէջ զանձուած ապահովագին եւ տոկոս	54,000,000	»
Ամէն տեսակ տեղեկութեանց ամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,	5 - 10	

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴԻՔ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցման բուսակի ճիւղեր

VICTORI ՎԻԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւնն-
րուն վճարումները չաթաթական մասնավճարներով տեղի կ'ունենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ից մը 1,244,457,577
Պահեստի դրամ 1902ից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար- ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ
այժմ ցն հրովարակով եւ ուղղակի Ծառ. Գայս. Պանքա
կառավարութեան հսկողութեան ներ- եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՅԱՅԵԱՆ

Տեսուչ
ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԷՃԵԱՆ

Պոլիս Քաբընքոյու խան
Քիւ 45 եւ 45 Ե. 5 - 10

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Պատկերազարդ 1000 հաւելի հշերհ

բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բառերու նորաբանութիւններ, — գաւառական բառեր հանրագրական հատուածներ, երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրինագիտութեան, ճարտարութեան: Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճառ եւ դիւրատար բառագրքի մը պէտքը ընդհանուր հղած էր ցարդ: Անտ ալդ պէտքը լրացնելու կոչուած է այն գործն, օգտակար ի հայ եւ օտար բաղմամբիւ բառագրքերէ: Խոսմքով հետազոտուած են բառերու ճշգրիտ նշանակութիւններն, անոնց որոշ եւ ամփոփ օտարներն, իրենց հակադրութիւններով ու համանիւններով, հին ու նոր պէտքէն առնուներով: Զոնց չէ առնուած նաեւ դնել բառերու ծագումն, կենդանեաց, բուսաց ո՛ր

շատակարգութեան վերաբերիլը, ի հարկին անոնց թուրքերէն ու ֆրանսերէնն եւս:

Բացի բուն բառագրքէն՝ գործոյս ամբողջ ընթացքին մէջ հանրագրական հատուածներ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրինագիտութեան, ճարտարութեան, գործնական կենաց վրայ:

Հրատարակուած են առջին երեք թերթերն եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն: Թուրք ազնիւ եւ սպազութիւն ընտիր եւ խնամեալ, դարդարուած յատկապէս փորագրուած սիրուն եւ ճաշակաւոր պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրալին քաղաքներէն առժամի օրն գերազանցապէս օգտակար գործոյն համար, 20 դառնկան, Պոլսոյ, 25՝ գաւառաց, թղթատարի ծախսը համար եւ 6 ֆրանք օտար երկիրներու համար:

Հեղինակին հասցէն՝

Կ: Պոլիս, Հաճօքաւլօ խան, Թիւ 24

6-10

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բաւով, հոսաւեհ եւ առողջաբար թէյերէն, որոնք ամբողջ եղանակին յարմարագոյն ըմպելին են:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու, Ճէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ, զլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Սգիպառ:

6-10



ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծփողոց Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գընողներէն՝ 100ին 15 զեղչով:

6-10

Հիւանդ կ'ընդունի՝ Պալատ, կողմը,
կտմաւորջին դէմի անկիւնը, իր դարձա-
նապատ մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ ի-
րիկուն. իսկ Բերա, Թաքսիմ, Քրանա-
կան հիւանդանոցին դէմ, ամէն օր առա-
տէն մինչեւ կէս օր եւ իրիկունն ժամ
6 էն 9 (Ը. Ե.) 6-10